Ltn
2246

1847

ԳՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Ըստ դաւանութեան Հայաստանեայց սրբոյ
եկեղեցւոյն,

յարմարեալ 'ի սկզբանէ նորոգ դառնալոյ մանկանց։

1999

'Ի Պատրիարգութեան Աթոռոյն Կոստանդնուպոլսոյ Տեառն Տեառն Մատթէոսի ա-ռաքելաշնորհ սրբազան Ընթերակոսոյ։

ԵՒՐ,
Յամի Տեառն 1847։

25

Tipografia: Incritsrea Armenei.

2

43909-4.2.

ԿՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

ՎԷՐԴԻՊԵՏՈՒԹԻՒՆ

Ըստ դաւանութեան Հայաստանեայց սրբոյ
եկեղեցւոյն.

281. 6.

Յարմարեալ 'ի պէտս նորահասակ մանկանց։

647.

Դ Պատրիարգութեան Աթոռոյն Կոստանդնուպոլսոյ Տեառն Տեառն Մատթէոսի ա-
ռաքելաշնորհ սրբազան Աղբեպիսկոպոսի։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՍՍՌ ԳԱ

ԵՒՐ,
Յամի Տեառն 1847։

Typographia: Institutum Albinel.

28061-62գ

Քննեցաւ և գտաւ ըստ ուղիղ դաւանութեան Հայաստանեայց ուղղափառ եկեղեցւոյս։

Տէր Ներսէս աւագ քահանայ Հայոց

2246-60

Հբ 2249

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

ՎԱՐԴԵՊԵՏՈՒԹԻՒՆ։

ԲԱԺԻՆ Ա.

Հարցումն. Նշանայր, դու քրիստոնեայ ես։

Պատասխանի. Հրամմերէք, քրիստոնեայ եմ Աստուծոյ շնորհքովը։

Հց. Քրիստոնեայն ինչ է։

Պխ. Քրիստոնեայն այն է՝ որ մկրտուած է Քրիստոսի սուրբ Եկեղեցւոյն աւազանին մէջը, և կրդաւանէ ամենասուրբ երրորդութիւնը և միասնուածութիւնը։

Հց. Քրիստոնէին գլխաւոր նշանը ո՞րն է։

Պխ. Քրիստոնէին մէկ գլխաւոր նշանը Քրիստոսին սուրբ խաչին ձևովը իր երեսը խաչա-

կընքելն է, և մէյմին ալ՝ իր ընկերը սիրելն է։

Հց. Ինչպէս պէտք է խաչակնքել։

Պխ. Աջ ձեռքը ճակատը տանելով՝ անկէ կուրծքին տակը, ետքն ալ ձախ և աջ ուսը՝ և այսպէս ըսելով՝ Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն։

Հց. Խաչակնքումը որո՞ւն անուամբը ընելու է։

Պխ. Խաչակնքումը ընելու է ամենասուրբ Երրորդութեան և միաստուածութեան անուամբը։

Հց. Սուրբ խաչը մեզի ի՞նչ կրսորուեցրնէ։

Պխ. Սուրբ՝ խաչը մեզի քրիստոնէական սուրբ հաւատոյն երկու մեծ խորհուրդները կրսորուեցրնէ, այսինքն՝ սուրբ Երրորդութեան և մարդեղութեան խորհուրդը։

Հց. Ինչ կընշանակէ Երրորդութիւն և միաստուածութիւն։

Պխ. Երրորդութիւն և միաստուածութիւն կընշանակէ թէ Աստուած մէկ է, բայց երեք անձն ունի. և այս երեք աստուածային անձանց կրսուի ամենասուրբ Երրորդութիւն։

Հց. Ինչ կընշանակէ մարդեղութեան խորհուրդը։

Պխ. Մարդեղութեան խորհուրդը կընշանակէ թէ

Յիսուս Քրիստոս որդին Աստուած աշխարհ եկաւ, մարմին առաւ, մեզի նման մարդ եղաւ. և իր չարչարանքովը՝ սուրբ խաչելութեամբը և մահուամբը մարդկային ազգին ըսկզբնական մեղքը ջնջեց, և իրեն հաւատացողները սատանային ձեռքէն ազատեց։

հց. Ինչ է ամենասուրբ Երրորդութեան անձանց անունը։

պխ. Ամենասուրբ Երրորդութեան անձանց անունը է՝ Հայր Աստուած, Որդի Աստուած և Հոգին սուրբ Աստուած։

հց. Հայր Աստուա՞ծ է։

պխ. Հրամմերէք, Աստուած է։

հց. Որդին Աստուա՞ծ է։

պխ. Հրամմերէք, Աստուած է.

հց. Հոգին սուրբը Աստուա՞ծ է։

պխ. Հրամմերէք, Աստուած է։

հց. Ուրեմն երեք Աստուած կայ։

պխ. Ո՛չ, անձինքը երեք են, բայց աստուած մէկ է։

հց. Այս երեք աստուածային անձանց մէջէն որը մեծ է։

պխ. Այս երեք աստուածային անձինքը մէկզմէկու

հաւասար են, մեծը կամ պզտիկը չկայ մէջերնին։

Հց. Օ՞քեզ ո՞վ ստեղծեց։

Պխ. Աստուած ամենակարող։

Հց. Ինչո՞ւ համար ստեղծեց։

Պխ. Որ զինքը ճանչնամ, պաշտեմ և սիրեմ այս աշխարհիս մէջը, և անդիմի աշխարհն ալ երկնից արքայութեան փառքը յաւիտեանս յաւիտենից վայելեմ։

Հց. Աստուած ի՞նչ բան է։

Պխ. Աստուած երկնի և երկրի և ամէն ստեղծուածներու ստեղծողն է, ամենաբարի՝ ամենազօր և ամենատես է, և ամէն երևելիներուն և անտեսանելիներուն բացարձակ տէրն է։

Հց. Աստուած սկիզբ ունի՞։

Պխ. Զէ՞ աստուած յաւիտենական է, ոչ երբէք սկիզբ ունեցաւ, և ոչ վերջ պիտոր ունենայ. միշտ եղած է, միշտ է և միշտ պիտի ըլլայ։

Հց. Աստուած ո՞ւր է։

Պխ. Աստուած երկինքը, երկիրը և ամէն տեղ է։

Հց. Ուրեմն Աստուած կրտեսնայ և դիտէ ամէն բան։

պխ. Հրամմերէք, Աստուած կըտեսնայ և գիտէ նաև մեր սրտին ամէն ծածուկ խորհուրդները։

հց. Աստուածային երեք անձանց մէջէն ո՞ր անձը մարդացաւ։

պխ. Աստուածային երեք անձանց մէջէն երկրորդ անձը մարդացաւ, այսինքն՝ Որդին Աստուծոյ բանն Աստուած՝ Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

հց. Ո՞վ է Յիսուս Քրիստոս։

պխ. Ճշմարիտ Աստուած և ճշմարիտ մարդ։

հց. Ինչպէս մարմին առաւ և մարդ եղաւ։

պխ. Միայն հոգւոյն սրբոյ զօրութեամբը յորովայնի անարատ և միշտ կուսին Մարիամու։

հց. Ո՞ւր տեղ ծնաւ։

պխ. Ռեթղէհէմ քաղաքը Հրէաստանին մէջ։

հց. Ինչո՞ւ համար մարմնացաւ։

պխ. Որ զմեզ ազատէ մեղքէն և դժոխքէն, և երկնից արքայութեանը արժանի ընէ։

հց. Երկնից արքայութիւնը երթալու համար, քանի՞ բան պէտք է։

պխ. Երկնից արքայութիւնը երթալու համար չորս բան պէտք է, այսինքն՝ հաւատք, յոյս, սէր

և բարի գործք։

հց. Քրիստոնէին հաւատքի մասունքները ո՞ւր գրուած են։

պէս. Քրիստոնէին հաւատքի մասունքները գրուած են հաւատոյ հանդանակին, այսինքն՝ հաւատամքին մէջը։

հց. Ո՞ւմ հաւատոյ հանդանակը որ լսեմ։

պէս. Հաւատամք 'ի մի Աստուած հայրն ամենակալ, յարարիչն երկնի և երկրի՝ երևելեաց և անտեսանելեաց։ Եւ 'ի մի տէր Յիսուս Քրիստոս որդին աստուծոյ՝ ծնեալն յաստուծոյ հօրէ՝ միածին, այսինքն յէութենէ հօր։ Աստուած՝ յաստուծոյ, լոյս՝ 'ի լուսոյ, Աստուած ճշմարիտ, յաստուծոյ ճշմարտէ՝ ծնունդ, և ոչ արարած։ Նոյն ինքն 'ի բնութենէ հօր. որով ամենայն ինչ եղև յերկինս և 'ի վերոյ երկրի, երևելիք և անտեսանելիք։ Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ 'ի յերկնից, մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս 'ի Մարիամայ սրբոյ կուսէն հոգւոյն սրբով։ Որով էառ զմարմին, զհոգի և զմիտս. և զամենայն՝ որ

ինչ է 'ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք։ Ճարշարեալ, խաչեալ, թաղեալ. յերրորդ աւուր յարուցեալ. ելեալ 'ի յերկինս նովին մարմնովն նստաւ ընդ աջմէ հօր։ Գալոց է նովին մարմնովն և փառօք հօր՝ 'ի դատել զկենդանիս և զմեռեալս. որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։ Հաւատամք և 'ի սուրբ հոգին՝ յանեղն և 'ի կատարեալն. որ խօսեցաւ յօրէնս, և 'ի մարգարէս, և յաւետարանս. որ էջն 'ի Յորդանան, քարոզեաց զառաքեալն, և բնակեցաւ 'ի սուրբսն։ Հաւատամք և 'ի մի միայն ընդհանրական և յառաքելական եկեղեցի։ 'Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց։ 'Ի յարութիւն մեռելոց. 'ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց։ Յարքայութիւնն երկնից, և 'ի կեանսն յաւիտենականս։

հց. Ո՞ւր է հիմա Յիսուս Քրիստոս։

պխ. Յիսուս Քրիստոս իր կուսական մարմնովը աստուածային ամենակարողութեամբը երկինքը համբարձաւ, և Հօր Աստուծոյ աջ կողմ-

մը նրատելով՝ հիմա անոր հետ հաւասար փառք և իշխանութիւն կրվարէ։

ԲԱԺԻՆ Բ.

Հց. Յոյսը ի՞նչ է։

պխ. Յոյսը Աստուծմէ պարգև մի է, որ անով վրատահութեամբ կրսպասենք իրմէն յաւիտենական կեանքը, և հոն հասնելու հարկաւոր եղած միջոցները։

Հց. Որո՞նք են այս հարկաւոր միջոցները։

պխ. Այս հարկաւոր միջոցները են, աղօթքը՝ սուրբ խորհուրդները և բարի գործքերը։

Հց. Ասոնց մէջէն ո՞րն է աւելի զօրաւոր միջոցը։

պխ. Ասոնց մէջէն մեզի պէտք եղած շնորհները աստուծմէ ընդունելու համար աւելի զօրաւոր միջոցը՝ աղօթքն է։

Հց. Աղօթքը ի՞նչ զօրութիւն ունի։

պխ. Աղօթքով մարդը Աստուծմէ ամմէն խընդրածներուն շնորհքը կընդունի։

Հց. Ո՞ր աղօթքէն կրնանք աւելի սորուիլ Աս-

տուծմէ խնդրելու շնորհները։

պխ. Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի մեզի սորուեցուցած աղօթքին մէջէն։

հց. Ինչ է այն աղօթքին անունը։

պխ. Այն աղօթքին անունը է՝ Տէրունական աղօթք, որ ամէն աղօթքներէն զօրաւոր և գերազանց է։

հց. Գիտե՞ս այս տէրունական աղօթքը։

պխ. Հրամմերէք՝ գիտեմ, վասն զի ամէն քրիստոնեայ պարտական է գիտնալու։

հց. Ասէ՛ որ լսեմ։

պխ. Հայր մեր՝ որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո՝ որպէս յերկինս և յերկրի. զհաց մեր հանապազորդ՝ տո՛ւր մեզ այսօր. և թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց. և մի տանիր զմեզ 'ի փորձութիւն. այլ փրկեա՛ 'ի չարէ։ Զի քո է արքայութիւն, և զօրութիւն, և փառք յաւիտեանս. ամէն։

հց. Աղօթքէն ուրիշ բան պէ՞տք է փրկութեան հասնելու համար։

պխ. Հրամմերէք, պէտք է պահելու նաև բնական, աստուածային և սուրբ Եկեղեցւոյ պատուէրները։

հց. Որո՞նք են բնական պատուէրները։

պխ. Բնական պատուէրները այս երկուքն են. առաջինը՝ ըրէ ուրիշին, ինչ որ կուզես որ քեզի ընեն. և երկրորդը՝ մի ըներ ուրիշին, ինչ որ չես ուզեր որ քեզի ընեն։

հց. Որո՞նք են Աստուծոյ պատուէրները։

պխ. Աստուծոյ պատուէրները այս տասն են։ Առաջինը, ես եմ քու տէր Աստուածդ, իզմէ զատ ուրիշ Աստուած չունենաս։ Երկրորդ, կուռք մի շիներ, անոնց երկրպագութիւն մի ըներ և մի պաշտեր։ Երրորդ, սուտ տեղ Աստուծոյ անունը մի յիշեր և երդում մի ըներ։ Չորրորդ, Շաբաթ օրը սուրբ պահէ։ (Որ եղբը սուրբ առաքեալները 'ի պատիւ Քրիստոսի յարութեանը՝ Շաբաթը Կիրակէի փոխեցին)։ Հինգերորդ, պատուէ քու հայրդ և մայրդ որ քեզի աղէկ ըլլայ, և աշխարհիս վրայ երկայն կեանք ունենաս։ Վեցերորդ, մի սպաներ։ Եօթ-

ներորդ, մի շնար։ Ութերորդ, մի գողանար։ Իններորդ, ընկերիդ վրայ սուտ վկայութիւն մի ըներ։ Տասներորդ, քու ընկերիդ կամ ուրիշ օտարին տանը կամ կնոջը և կամ առնոր ունեցած բանի մը ամենևին մի ցանկար։

Հց. Սուրբ Եկեղեցւոյ պատուէրները քանի՞ են։

պխ. Սուրբ Եկեղեցւոյ պատուէրները հինգ են։ Նախ, ամէն կիրակի և տօնի օրերը պատարագ տեսնալ և բան չիբանիլ։ Երկրորդ, պահք պահել մեծ պահոց և ուրիշ պահոց օրերը։ Երրորդ, խոստովանիլ և հաղորդութիւն առնուլ գոնէ տարին մէկ անգամ սուրբ Օ՛ատկին։ Չորրորդ, Եկեղեցւոյն հրաման չիտուած ժամանակները հարսնիք չընել։ Եւ հինգերորդ, վաստակին տասանորդը ողորմութիւն տալ։

Հց. Ո՛վ որ այս պատուէրները չիպահեր՝ ի՞նչ ըրած կը լլայ։

պխ. Ո՞վ որ այս պատուէրները չիպահեր՝ մեղք գործած կը լլայ։

Հց. Մեղքը քանի՞ կերպ է։

պխ. Մեղքը երկու կերպ է, սկզբնական և ներ-

գործական։

Հց. Ո՞րն է սկզբնական մեղքը։

պխ. Սկզբնական մեղքն է այն՝ որ Ադամ մեր նախահայրը Աստուծոյ պատուիրանին դէմ ըրած անհնազանդութեանը համար՝ ամէն նոր ծընանողները այն մեղքին մէջը կրծնանին. և այս մեղքը սուրբ մկրտութեամբ կըջնջուի։

Հց. Ո՞րն է ներգործական մեղքը։

պխ. Ներգործական մեղքն է այն՝ որ եղբը մեր կամքովը չար կըգործենք. և այս կըջնջուի զղջմամբ՝ խոստովանութեամբ և ապաշխարութեամբ։

Հց. Քանի՞ տեսակ է ներգործական մեղքը։

պխ. Ներգործական մեղքը երկու տեսակ է, ներելի և մահացու, կամ թեթև և ծանր։

Հց. Ներելի մեղքը ի՞նչ է։

պխ. Ներելի մեղքն է այն, որ ըստ ինքեան թեթև մեղք մըն է. որն որ տկարութեամբ կամ անդիտութեամբ կըգործենք, և աստուծոյ սէրը միշտ սրտերնուս մէջը ունինք։

Հց. Ի՞նչ է մահացու մեղքը։

պխ. Մահացու մեղքն է այն՝ որ ըստ ինքեան

մեծ մեղք մին է, որն որ յօժար կամօք և գիտութեամբ կը գործենք, և Աստուծոյ սէրը բոլորովին սրտերնէս կը հանենք։

հց. Քանի՞ են մահացու մեղքերը։

պխ. Գլխաւոր մահացու մեղքերը այս եօթն են. հպարտութիւն, նախանձ, բարկութիւն, ծուլութիւն, ագահութիւն, որկրամոլութիւն, և բղջախոհութիւն։

հց. Այս մահացու մեղքերուն դէմ եղած առաքինութիւնները քանի՞ են։

պխ. Այս մահացու մեղքերուն դէմ եղած առաքինութիւնները այս եօթն են. խոնարհութիւն, բարեհաճութիւն, հեզութիւն, առատասրտութիւն, արիութիւն, պահեցողութիւն, և ողջախոհութիւն։

հց. Հոգւոյն սրբոյ դէմ եղած մեղքերը քանի՞ են։

պխ. Հոգւոյն սրբոյ դէմ եղած մեղքերը այս վեցն են. նախ՝ յուսահատութիւն փրկութեան հասնելու, երկրորդ՝ կարծիք փրկութեան առանց բարի գործոց, երրորդ՝ հակառակութիւն ճշմարտութեան, չորրորդ՝ նախանձիլ ուրիշին բարեացը, հինգերորդ՝ մեղաց մէջ պինտ կենալը,

և վեցերորդ՝ անղեղջ մեռանիլը։

հց. Աստուծմէ վրէժխնդիր մեղքերը քանի՞ են.

պխ. Աստուծմէ վրէժխնդիր մեղքերը այս չորսն են. անմեղ սպանումն, արուագիտութիւն, աղքատը զրկել, և ծառաներուն վարձքը կտրել կամ ամենևին չիտալ։

հց. Մեղքը ի՞նչ բանով կըգործուի։

պխ. Մեղքը հոգւոյն կարողութեամբը և մարմնոյն զգայարանօքը կըգործուի։

հց. Քանի՞ է հոգւոյն կարողութիւնը։

պխ. Հոգւոյն կարողութիւնը երեք է. յիշողութիւն, միտք և կամք։

հց. Քանի՞ են մարմնոյն զգայարանքը։

պխ. Մարմնոյն զգայարանքը հինգ են. աչք, ականջ, քիթ, բերան և ձեռք։

հց. Որո՞նք են զմեղ մեղքի մէջ ձգողները։

պխ. Զմեզ մեղքի մէջ ձգողները՝ մեր գլխաւոր թշնամիներն են։

հց. Որո՞նք են մեր գլխաւոր թշնամիները։

պխ. Մեր գլխաւոր թշնամիներն են. աշխարհ, սատանայ և մեր մարմինը։

հց. Մեղք չիգործելու համար ի՞նչ պէտք է ընել։

պխ. Մեղք չգործելու համար՝ պէտք է որ մըտքերնիս բերենք մեր վերջինքը։

հց. Քանի՞ են մարդուս վերջինքը։

պխ. Մարդուս վերջինքը չորս են. մահ, դատաստան, դժոխք և արքայութիւն։

հց. Երբոր մեռնինք, հոգինիս ալ կըմեռնի։

պխ. Չէ՛ քաւ լեցի, վասն զի մեր հոգին անմահ է։

հց. Քանի՞ է Աստուծոյ դատաստանը։

պխ. Աստուծոյ դատաստանը երկուք է. մասնաւոր և ընդհանուր։

հց. Ո՞րը է մասնաւոր դատաստանը։

պխ Մասնաւոր դատաստանն է, մեռնելնուս պէս։

հց. Ի՞նչ կըհանդիպի այն ատենը։

պխ. Այն ատենը ամէն արդար կամ ապաշխարութիւնը քաշած հոգին շնորհակ արքայութիւն կերթայ։ Իսկ եթէ ներելի մեղք ունի կամ ապաշխարանքը չէ կատարեր՝ այնպիսոյն համար Աստուած ամենակարող տեղ մը պատրաստեր է, և հոն պիտի մնայ մինչև որ սուրբ պատարագով և աղօթքով իր մեղացը թողութիւն գտնայ և կրնայ արքայութեանը արժանի ըլլալ։ Ինչ

28061-62
ՄԵՏ ԿԱՌ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՌ ԳՍՌ

ման և խոստովանութեան մահացու մեղքի մէջ մեռնող հոգւոյն համար՝ դժոխքը սահմանուած է։

հց. Ո՞րը է ընդհանուր դատաստանը։

պխ. Ընդհանուր դատաստանը աշխարհիս կատարածին է, որ այն տեղը Յիսուս Քրիստոս մէյ մըն ալ իր մարմնովը՝ անպատմելի փառքով և երկնային զօրութեամբը աշխարհ պիտի դայ, թէ բարի մարդկան և թէ չարերուն վերջի դատաստանը կտրելու և զանոնք մէկզմէկէ զատելու. բարի ընտրեալները իր աջ կողմը ժողովելով՝ երկնից արքայութեան փառքը յաւիտեանս յաւիտենից անոնց պիտոր հաղորդէ իսկ չար մեղաւորները իր առջևէն վռնտելով՝ թող պիտի տայ որ յաւիտենական դժոխային տանջանացը մէջ տանջուին։

հց. Ինչ է դժոխքը։

պխ. Դժոխքը սոսկալի բանտ մըն է, ուր որ մեղաւորները անշեջանելի հրոյն մէջը սաստիկ տանջանքներ կրքաշեն յաւիտեանս յաւիտենից։

ՔԱՌԽՆԴ Գ.

Հց. Սէրը ի՞նչ է։

պխ. Սէրը հոգւոյն սուրբէն մեր հոգւոյն հեղուած առաքինութիւն մըն է։

Հց. Ո՞վ պէտք է աւելի սիրել։

պխ. Պարտական ենք նախ՝ ամէն բաներէն աւելի Աստուած սիրել, և երկրորդ՝ մեր անձը և ընկերը։

Հց. Ինչո՞ւ համար պարտական ենք ամէն բաներէն աւելի Աստուած սիրել։

պխ. Որովհետև Աստուած իր անսահման կատարելութեամբը ինքիրմէ ամէն սիրելութեան արժանի է, անոր համար մենք ալ պարտական ենք ամէն բաներէն աւելի զինքը սիրելու։

Հց. Ինչո՞վ կրնանք Աստուած աւելի սիրել։

պխ. Աստուած աւելի սիրած կը լլանք՝ երբոր իր պատուիրանացը հաւատարմութեամբ կը հնազանդինք, և զանոնք ըստ ամենայնի կատարելու կը ջանանք։

Հց. Ինչպէս կրնանք մեր անձը սիրել։

պխ. Մեր անձը կը սիրենք, թէ որ մեղքէն կը-

փախչինք, որ մեր անձին թշնամին է. և մեր հոգւոյն փրկութեանը փոյթ կունենանք, որ մեր ճշմարիտ բարին է։

հց. Ինչու համար պարտական ենք մեր ընկերը սիրել։

պխ. Մեր ընկերը պարտական ենք Աստուծոյ սիրոյն համար սիրել, վասն զի ինքն ալ մեզի պէս Աստուծոյ պատկերին նման ստեղծուած է։

հց. Սիրոյ կարգը ի՞նչպէս կըպահանջէ մեր ընկերը սիրել։

պխ. Սիրոյ կարգը կըպահանջէ նախ՝ մեր ծնողքը՝ եղբարքը՝ ազգականները՝ բարեկամները՝ հաւատակիցները և ուրիշ ամէն մարդիկը այսպէս ըստ կարգին սիրել։

հց. Որո՞նք են մեր հաւատակիցները։

պխ. Մեր հաւատակիցները են անոնք՝ որ մեզի հետ մի և նոյն սուրբ Եկեղեցւոյն աւազանին մէջը եղբայր եղած՝ և այն Եկեղեցւոյ ամէն խորհուրդները ընդունած են։

հց. Քանի՞ են սուրբ Եկեղեցւոյ խորհուրդները։

պխ. Սուրբ Եկեղեցւոյ խորհուրդները այս եօթն են. մկրտութիւն, դրոշմ, հաղորդութիւն,

ապաշխարութիւն, վերջին օծումն, կարգ քահանայութեան, և պսակ։

Հց. Այս սուրբ խորհուրդները ընդունելու ի՞նչ պէտք է։

պխ. Այս սուրբ խորհուրդները ընդունելու պէտք է մաքրութիւն խղճի մտաց և առաքինութիւն։

Հց. Առաքինութիւնը քանի՞ կերպ է։

պխ. Առաքինութիւնը երեք կերպ է. աստուածաբանական, բարոյական և աւետարանական։

Հց. Որո՞նք են աստուածաբանական առաքինութիւնները։

պխ. Աստուածաբանական առաքինութիւնները այս երեքն են. հաւատք, յոյս և սէր։

Հց. Որո՞նք են բարոյական առաքինութիւնները։

պխ. Բարոյական առաքինութիւնները այս չորսն են. խոհեմութիւն, արիութիւն, արդարութիւն և բարեխառնութիւն։

Հց. Որո՞նք են աւետարանական առաքինութիւնները։

պխ. Աւետարանական առաքինութիւնները այս ութն են, որ և կըսուին ութ երանութիւնք. նախ՝ հոգւով աղքատ ըլլալ, երկրորդ՝ հեզ

ըլլալ, երրորդ՝ սդաւոր ըլլալ, չորրորդ՝ քաղցեալ և ծարաւի ըլլալ արդարութեան, հինգերորդ՝ ողորմած ըլլալ, վեցերորդ՝ սիրտ սուրբ ունենալ, եօթներորդ՝ խաղաղարար ըլլալ, և ութերորդ՝ արդարութեան համար հալածում կրել։

Հց. Այս առաքինութիւնները ինչով կրնայ մարդը ստանալ։

պխ. Այս առաքինութիւնները մարդը կրնայ հոգւոյն սրբոյ պարգևներովը ստանալ։

Հց. Քանի՞ են հոգւոյն սրբոյ պարգևները։

պխ. Հոգւոյն սրբոյ պարգևները այս եօթն են. իմաստութիւն, հանճար, խորհուրդ, զօրութիւն, գիտութիւն, աստուածպաշտութիւն և երկիւղ Աստուծոյ։

ԲԱԺԻՆ Դ.

Հց. Առաքինութիւններուն գլխաւոր գործքերը՝ որո՞նք են։

պխ. Առաքինութիւններուն գլխաւոր գործքերը

բարի գործքերն են։

Հց. Ո՞րն է բարի գործքերուն գլխաւորը։

պխ. Բարի գործքերուն գլխաւորը՝ ողորմութիւնն է։

Հց. Ողորմութեամբ ի՞նչ կիմանանք։

պխ. Ողորմութեամբ մեր եղբարցը և ընկերացը ամէն տեսակ սիրոյ և ողորմութիւն ընելու գործքերը կիմանանք։

Հց. Քանի՞ են ողորմութեան գործքերը։

պխ. Ողորմութեան գործքերը երկուք են՝ հոգեւոր և մարմնաւոր։

Հց. Ո՞րոնք են հոգեւոր ողորմութեան գործքերը։

պխ. Հոգեւոր ողորմութեան գործքերը այս եօթն են. տարակուսող մարդուն աղէկ խորհուրդ տալ, տգետին բարի բան սորուեցընել, մեղքէն ետ չիկեցողը խրատել, տրտումը մխիթարել, յանցանք ընողին ներել, նեղութեան ատենը համբերել, և կենդանեաց ու ննջեցելոց համար աղօթք ընել։

Հց. Ո՞րոնք են մարմնաւոր ողորմութեան գործքերը։

պխ. Մարմնաւոր ողորմութեան գործքերը այս եօթն են. քաղցածը կերակրել, ծարաւին ջուր տալ, մերկը հագցընել, օտար մար-

դը ընդունիլ, հիւանդը տեսնալու երթալ, բանտը կեցողը երթալ մխիթարել, և տէր չունեցող մեռելը թաղել։

Հց. Բարի գործքը ի՞նչպէս պէտք է որ գործենք։

պխ. Բարի գործքը պէտք է որ յօժարութեամբ գործենք՝ Աստուծոյ շնորհքովը և անոր սիրոյն համար։

Հց. Փրկութեան հասնելու համար հարկաւո՞ր է բարի գործքը։

պխ. Հրամմերէք, վասն զի արքայութիւնն ալ որ վարձք մըն է՝ հարկաւոր է բարի գործքերով անոր արժանի ըլլալ. և Յիսուս Քրիստոս արքայութեանը մէջ ամէն մարդուն գործոցը համեմատ՝ ուրիշ-վարձքեր ալ պիտոր տայ։

Հց. Արքայութիւնը ի՞նչ է։

պխ. Արքայութիւնը փառաւոր տեղ մըն է երկինքը, ուր ամէն հրեշտակները՝ սուրբերը և արդար հոգիները Աստուծոյ տեսութիւնը կը-վայելեն և հոն կուրախանան յաւիտեանս յաւիտենից։

ՎԵՐՋ։

Spec 104